25 հունիսի 2026թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ
Վահրամ Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

Անվտանգային վերլուծությունների ինստիտուտը հուլիսի 24-26-ը Կոտայքի մարզի գ. Մարմարիկում գտնվող «Հորիզոն» ճամբարում կազմակերպում է «Երիտասարդական անվտանգային հետաքննական աշխատարան» ծրագիրը:

Աշխատարանը նախատեսված է 21-28 տարեկան երիտասարդների համար Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից: Ծրագրին կարող են դիմել երիտասարդներ, ովքեր հետաքրքրված են ազգային անվտանգությամբ, հետաքննական լրագրությամբ, փորձագիտական և մեդիա աշխատանքով, բաց աղբյուրների ուսումնասիրությամբ, ապատեղեկատվության դեմ պայքարով, քաղաքացիական ներգրավվածությամբ և Հայաստանի տեղեկատվական դիմադրողականության ամրապնդմամբ:

Եռօրյա աշխատարանը կառուցված է լինելու գործնական աշխատանքի սկզբունքով. մասնակիցները ներգրավվելու են իրավիճակային վարժանքներում, թիմային առաջադրանքներում:

Մասնակցությունն անվճար է. մասնակիցների տեղափոխման, կեցության և սննդի բոլոր ծախսերը հոգում են կազմակերպիչները:

Աշխատարանը դիտարկվում է որպես երկարաժամկետ նախաձեռնության մեկնարկ: Ծրագրի ավարտից հետո առավել ակտիվ և մոտիվացված մասնակիցները կարող են հնարավորություն ստանալ շարունակելու համագործակցությունը Անվտանգային վերլուծությունների ինստիտուտի հետ՝ ներգրավվելով մարզային հետաքննական, մեդիա և վերլուծական աշխատանքներում:

Հաշվի առնելով ծրագրի մարզային ընդգրկումը՝ խնդրում ենք աջակցել հայտարարության տարածմանը Ձեր մարզի երիտասարդների, համայնքների, կրթական հաստատությունների, երիտասարդական կառույցների և համապատասխան մարզային հարթակների շրջանում:

Կից ներկայացնում ենք ծրագրի հայտարարությունը՝ տարածման նպատակով: Հայտադիմումի հղումը՝ https://forms.gle/KaHVgaShDPcvDjbR9

Հարցերի դեպքում կարող եք կապվել ծրագրի համակարգող Ալվարդ Զաքարյանի հետ՝ +374 95 202 148 հեռախոսահամարով:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության և աջակցության համար:

Հարգանքով՝

Լիլիթ Գևորգյան
Գործադիր տնօրեն

Sayat-Nova 40, 0025 Yerevan, Armenia
www.securityandanalysis.net
info@securityandanalysis.net
(+374) 93 197613